Հաստատում եմ

Դպրոցի տնօրեն՝ Ս.Պետրոսյան

Փոխտնօրեն՝ Ա. Սերսիսյան

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ – ՕՐԱԳԻՐ

Դասվար՝ Նադարյան

Դասարան՝ I

2023-2024

Սովորողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ եւ պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով եւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

2. Սովորողն իրավունք ունի՝

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը եւ ուսուցման ձեւը, ինչպես նաեւ տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.

3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնամեթոդական բազայից.

4) մասնակցելու ներդպրոցական եւ արտադպրոցական միջոցառումների.

5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական եւ հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական եւ այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.

6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

7) ազատորեն փնտրելու եւ մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

9) օգտվելու օրենքով եւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3. Սովորողը պարտավոր է՝

1) կատարել ուսումնական հաստատության կանոնադրության եւ ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել եւ տիրապետել համապատասխան հմտությունների եւ կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.

3) հաճախել եւ մասնակցել ուսումնական պարապմունքներին.

4) կատարել օրենքով եւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Սովորողի ծնողի իրավունքներն ու պարտականությունները

1. Սովորողի ծնողն իրավունք ունի՝

1) երեխայի ուսուցման համար ընտրելու ուսումնական հաստատությունը եւ կրթության ձեւը.

2) համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով.

3) դիմելու համապատասխան մարմիններին երեխայի զարգացման, ուսուցման եւ դաստիարակության հարցերով.

4) պաշտպանելու իր եւ իր երեխայի օրինական շահերը համապատասխան մարմիններում.

5) մասնակցելու հանրակրթական ծրագրերի իրականացման եւ դրանց արդյունավետության գնահատման գործընթացին.

6) մասնակցելու ուսումնական հաստատության ներքին գնահատմանը.

7) մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Սովորողի ծնողն ունի նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

2. Սովորողի ծնողը պարտավոր է՝

1) երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար.

2) մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական առողջության եւ հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների եւ ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար.

3) հարգել երեխայի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական եւ մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների եւ սովորույթների նկատմամբ.

4) դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների եւ հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության եւ շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների եւ մշակույթների նկատմամբ.

5) դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության եւ մանկավարժական աշխատողների նկատմամբ.

6) սույն օրենքի 15-րդ եւ 16-րդ հոդվածներով սահմանված ժամկետներում երեխային բերել ուսումնական հաստատություն.

7) հատուցել իր, ինչպես նաեւ իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը.

8) սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ, ինչպես նաեւ օրենքով եւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված այլ նյութեր օգտագործելուց:

2023-2024 ուստարվա դաստիարակչական աշխատանքների նպատակներն ու խնդիրները

- Զարգացնել արտադասարանական կրթության համակարգը, կատարելագործել ընտանիքի և դպրոցի փոխհարաբերությունները:
- Ապահովել յուրաքանչյուր սովորողի համակողմանի զարգացումը:
- Իրականացնել աշակերտների դաստիարակության մակարդակի ուսումնասիրություն:
- Նպաստել աշակերտի արժեքային համակարգի ձևավորմանը:
- Նպաստել արտադասարանական աշխատանքների կայուն համակարգի ստեղծմանը:

Դաստիարակչական աշխատանքներն ըստ ուղղությունների

Հոգևոր դաստիարակություն: *Այս նպատակով անհրաժեշտ է գաղափար տալհայ առաքելական եկեղեցու պատմության մասին,մեր հոգևոր արժեքների մասին,ծանոթացնել եկեղեցական տոների և դրանց նշանակության հետ:*

Գեղագիտական դաստիարակություն: *Աշակերտների մեջ ձևավորել աշխարհում գեղեցիկը տեսնելու , զգալու,գնահատելու կարողություններ,այդ ամենը արտահայտելու հմտություններ:*

Ռազմա –հայրենասիրական դաստիարակություն: *Ծանոթացնել հայ հերոս նախնիների ու նրանց քաջագործությունների պատմության հետ,պատմել զորավարների մասին:*

Առողջ ապրելակերպ և ֆիզիկական դաստիարակություն: *Առողջ և ուժեղ ֆիզիկական մարմին ունենալու համար անհրաժեշտ է ամեն օր կոփել մարմինը:Բացատրել և պահանջել,որ աշակերտները հետևեն իրենց ֆիզիկական պատրաստվածությանը, զբաղվեն սպորտով:*

Աշխատանքային դաստիարակություն: *Մեր և հարգանք առաջացնել աշխատանքի նկատմամբ,հասնել այն բանին, որ աշակերտները գիտակցեն աշխատանքի կարևորությունը:*

Բնապահպանակն դաստիարակություն:Մաքուր պահել բնությունը և խնամել:Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկ:Կարևորել բնապահպանական խնդիրները:

Դաստիարակչական աշխատանքներն ըստ ուղղությունների

Ուղղություն	Աշխատանք	Կատարման ժամկետ	Արդյունք
Աշխատանքային և հոգևոր դաստիարակություն	1.Մաքուր դպրոց,դասարան 2.Ընթերցում մանկական աստվածաշնչից: 3.Կանաչ անկյան ձևավորում 4.Վնասված գրքերի նորոգում 5.Սուրբ ծննդյան տոնի խորհուրդը	1.Սեպտեմբեր 2.Տարվա ընթացքում Հոկտեմբեր 4.Մայիս 5.Հունվար	
Առողջ ապրելակերպ և ֆիզիկական դաստիարակություն	1.Օրվա ռեժիմի կազմում 2.Առողջ մարմնում առողջ հոգի 3.Անձնական հիգիենա 4.Վիտամինների աշխարհում	1.Սեպտեմբեր 2.Նոյեմբեր 3.Տարվա ընթացքում 4.Մարտ	
Ռազմահայրենասիրական դաստիարակություն	1.Հայրենիքիս անկախությունը 2.Նոր տարին Հայաստանում 3.Հայրենասիրական մուլտֆիլմի դիտում 4.Զեզ բացակա չենք դնի	1.Սեպտեմբեր 2.Դեկտեմբեր 3.Տարվա ընթացքում 4.Ապրիլ	
Բնապահպանական դաստիարակություն	1.Բույսերի խնամքը 2.Ձմեռող թռչուններ 3.Երկրի օր 4. Խնայենք ջրի պաշարները	1.Հոկտեմբեր 2.Նոյեմբեր 3.Ապրիլ 4.Մայիս	
	1.Աշնանային	1.Հոկտեմբեր	

Գեղագիտական դաստիարակություն	բնանկար/նկարների մրցույթ/ 2.Ամանորյա երգի ուսուցում 3.Տոնական բացիկների պատրաստում 4.Խոսենք բարեկիրթ	2.Դեկտեմբեր 3.Մարտ 4.Տարվա ընթացքում	

Դասղեկի ժամերի տարեկան թեմատիկա

N	Թեմա	Օր
1	Բարև ,դպրոց	06.09
2	Դրոշ,զինանշան,օրհներգի ուսուցում	13.09
3	Ազատ,անկախ Հայաստան	20.09
4	Օրվա ռեժիմը և առողջությունը	27.09
5	Իմ սիրելի ուսուցչին	04.10
6	Ընկերություն և ընկերասիրություն	11.10
7	Աշնանային բնանկար	01.11
8	Շնորհակալությունը,ներեցեքը և խնդրեմը	08.11
9	Հանդուրժողականության ուսուցում:	15.11
10	Սովորողների իրավունքներն ու պարտականությունները	22.11
11	Երթևեկության կանոնները ձմռանը	29.11
12	Ինչ է երկրաշարժը:Անվտանգության կանոններ	06.12
13	Օգնենք ձմեռող թռչուններին	13.12
14	Նմակ Ձմեռ պապիկին	20.12
15	ՈՒրախ տոնենք ամանորը	23.01
16	Հայոց բանակ,մեր հաղթական	30.01
17	Հայկական ավանդական տոներ	07.02
18	Գիրք նվիրելու օր	14.02
19	Մայրենի լեզու,մայրենի բարբառ	21.02
20	Իմ հայրիկը իմ պաշտպանն է	28.02
21	Գարունը նման է մայրիկիս	06.03
22	Վնասակար սովորություններ	13.03
23	Պահպանենք բնությունը	03.04
24	Ինչ է ազնվությունը	10.04
25	Ինչ եմ երազում	17.04
26	Եղեռնի զոհերի հիշատակի օր	24.04
27	Ով աշխատի,նա կուտի	01.05
28	Հանուն հաղթանակի	08.05
29	Ինչ սովորեցի առաջին դասարանում	15.05
30	Ինչպես կազմակերպել ամառային հանգիստը	22.05

Արտադասարանական աշխատանքներ

Թեման	Նպատակը	Ժամկետը	Պատասխանատու
<<Մեր իրավունքները մեր պաշտպաններն են>>	Ծանոթացնել երեխայի իրավունքներից մի քանիսին, օգնել գիտակցել դրանց անհրաժեշտությունը:	Հոկտեմբեր	Նադարյան
<<Լինենք առողջ>> կլոր սեղանի կազմակերպում	Սովորեցնել տարբերել և օգտագործել միայն առողջ սնունդ:Ամրապնդել ծնող_աշակերտ _ուսուցիչ կապը	Նոյեմբեր	Նադարյան
Ամանորյա խաղալիքների պատրաստում	Զարգացնել ստեղծագործական կարողությունները: Սովորեցնել գնահատել գեղեցիկը:	Դեկտեմբեր	Նադարյան
Անակնկալ հայրիկին,մայրիկին	Սովորեցնել սիրել և գնահատել ծնողներին:	Հունվար/մարտ	Նադարյան
Շաբաթօրյակ դասարանում,դպրոցի բակում	Դաստիարակել սեր դեպի աշխատանքը	Մայիս	Նադարյան
Լավագույն ընթերցող	Դաստիարակել սեր ընթերցանության նկատմամբ	Փետրվար	Նադարյան